տեղ ենք տալիս ռուսաց «Նեդելիա» շաբաթաթերթի ներկայ յօդուածին [1]), որի թարգմանութիւնը պատկանում է «Մուրճ»-ի աշխատակից Բ-ին։

Ա. Ա.

Խուլ աշուն է։ Երկինքը մոխրագոյն է և ամպոյն։ Սկսում է մթնանալ։ Փոքրիկ և աղքատիկ գիւղի ծայրին մարդիկ են հաւաքւած։ Դրանց մեծ մասը մանուկներ ու դեռահաս երիտասարդներ են։ Ցուսած ցանկապատի մօտ մի ինչ որ բանի մասին վիճում է գիւղացիների մի խումբ։ Թումբի վրայ նստած են գոնչգոյն հագուստներով կանայք (օրը տօն էր)։ տան առաջ, սանդուխքների վրայ տեղաւորւել են երկու ծերուկ։ Կանայք երգում են, ճչող ձայներ հանելով. մանուկները խաղում են։ Հեռու, ճանապարհին, այնտեղ, ուր նա ծռւում է դէպի անտառին, երևում է տղայոց մի խումբ, որոնք «գնացել են լապտերը հանդիպելու»։ Եթէ դուք հարցնէք, այդ ինչ «լապտեր» է, ձեզ կը պատասխանեն, թէ «կայ մի այնպիսի հրաշալի լապտեր, որը իրանից մեծ լոյս է տալիս և կտաւի վրայ փոքրիկ պատկերից մեծն է հանում. զարմանալու մի բան է»։

Լապտեր գալը գիւղի համար մի նշանաւոր անցք է։ Դաշտային պարապմունքները վաղուց աւարտւել են, չտապելու գործ չկայ, գիւղացիները բաւականի աղատ ժամանակ ունեն, լինում են տաղտկալի ժամեր։ Աշնանային և ձմերային այս ժամանակը գրքի սիրահարների թիւը բազմանում է։ Մեր գաւառում այս միջոցին սակաւ կարելի է գիւղ հանդիպել, ուր այս կամ այն խրճիթում ընթերցումներ չը լինեն սարքւում. հաւաքւում են գրագէտները, հաւաքւում են անգրագէտները։ Ձրագին մօտենում է գրագէտներից մէկը, լաճախ մի որևիցէ փոքրիկ աշակերտ։ Վարժ չէ կարդում ընթերցողը, բայց ինչ հետաքրքրութեամբ են նրան լսում. իսկ եթէ գիրքն էլ հետաքրքիր է, լսել ցանկացողներից անկարելի է աղատւել, և գիրքը անցնում է խրճիթից խրճիթ։

Այս ընթերցումները առաջ են գալիս նոյնպէս ինքնաբերաբար, ինչպէս և գրագիտութեան ուսումնարանները։ Պահանջ է առաջ եկել—և ժողովուրդը նրան բաւականութիւն է տալիս, որքան կարող է, թէև նւազ, բայց իր միջոցներով։ Զը վախենալով չափաղանցութիւնից, մենք կարող ենք ասել, որ ինչտեղ կան գրագէտներ, այնտեղ կազմւում են այդպիսի գրականան երեկոյթներ, ընթերցումներ և նոյն իսկ գրականական շրջան-

---

[1]) Недѣля 1891 г. № 7.

ներ։ Այն, դրանք գրականական շրջաններ են իրանց մշտական կարդացողներով և մշտական լսողներով։ Նոյն իսկ ընթերցանութեան բնաւորութիւնը տարբեր է գանազան շրջաններում. մի տեղ գերիշխում են կրօնական բովանդակութեամբ գրքեր, մի ուրիշ տեղ գեղարուեստական և այլն։ Ցաւոնի են նոյնպէս դէպքեր, երբ գիւղացիները մասնաւորապէս ընթերցումների համար վարձում են առանձին խրճիթ։ Այդպիսի ընթերցանութիւնների պահանջը վաղուց է հասել և գիւղացիները կազմելով այդպիսի շրջաններ, ուրախութեամբ ընդունում են այն մարդկանց, որոնք լապտերով ընթերցումներ են սարքում։

Այն բոլոր գիւղերից, ուր երևացել է մոգական լապտերը, լսում են ձայներ, որոնք վկայում են ստերաւոր պատկերներով ժողովրդական ընթերցանութիւնների ահագին աջողութիւնը և նրանց անկասկածելի օգուտը։ «Ընթերցանութիւնները սկսելուց դեռ մի ամիս առաջ—գրում է Պետերդոֆ դաւառի վարժուհիներից մէկը—գալիս էին ինձ մօտ հասակաւորները ու երիտասարդները հարցնելու՝ արդեօք չի՞ եկել լապտերը։ Լապտեր ստանալու օրը բոլորքեանք հաւաքւած են եղել դասատուն և կէսօրուայ երեք ժամից սկսած սպասել են մինչև երեկոյեան ութ ժամը։ Թէև այդ օրը ընթերցում չէր նշանակւած, բայց՝ լապտեր սպասողներին բաւականութիւն տալու համար՝ ես ստիպւած էի նրանց մի քանի պատկերներ ցոյց տալ»։

Հէնց որ ստացւում է լապտերը, վարժուհուն պաշարում են հարցերով, երբ և ինչ պիտի կարդացւի։ Կարդալու օրւայ մասին գիտեն արդէն բոլորը։ Բաւական է, որ ուսուցիչը կամ ուսուցչուհին ասէ այդ աշակերտներից մէկին, որ իմանալ ամբողջ գիւղը։ Եթէ անկարմար օր է նշանակւած, գիւղացիները իրանք խնդրում են մի ուրիշ օր ընտրել։ Ընթերցումներին գալիս են և 3—5 վերստ հեռաւորութեան վրայ գտնւող գիւղերից։ Վարժուհիներից մէկը իւր տեղեկագրի մէջ պատմում է, որ իւր ընթերցումների միջոցին պատահել է գիւղացիների, որոնք ապրում են եղել ուսումնարանից 15 վերստ հեռաւորութեան վրայ։

Նշանակւած ժամին ուսումնարանը լցւում է հիւրերով. բոլոր աշակերտները անպատճառ ներկայ են լինում, նոյն իսկ փոքրիկ պատրաստականը. թողլ են տրւում և հին աշակերտները. գալիս են և աշակերտների ծնողները և ազգականները, նոյն իսկ ծծկեր երեխաներով կանայք։ «Դրան ինչու՞ ես բերել»։—«իսկ տանը ո՞ւմ խնամքի պիտի թողնէի, բոլորը այստեղ են»։ Երբեմն այնքան մարդ էր հաւաքւում—գրում է վարժուհիներից մէկը—որ դասարանում տեղ չէր լինում, նախասենեակը տանող դռները բացւում էին և այնտեղ մարդիկ էին կանգնում. շատերն էլ նոյն իսկ փողոցումն էին կանգնում, լուսամուտներից նայում ու լուսանցքներից լսում։ «Ընթերցանութիւնը լսելու համար թողւած էին տան գործերը, վկայում է մի ուրիշը, տեղական գինետնում այդ օրը մարդ չկար»։ Գործը երբեմն կատարերդութեան է հասնում։ Օրինակ, մի այսպիսի դէպք. մարդը տանն է

թողնում կնոջը ծծկեր երեխայով, իսկ ինքը իւր փոքրիկ որդու հետ գալիս է ուսումնարան։ Դեռ հազիւ սկսել է ընթերցանութիւնը, մտնում է կինը։ Մարդը պահանջում է, որ նա տուն վերադառնայ։ Կինը չի համաձայնում, ասելով՝ «ինչ պիտի անեմ տանը, ինքդ գնա, եթէ ուզում ես»։ Ձէ՞ որ բոլորը բաց է և խրճիթում մարդ չը կայ։—Ինչպէս թէ մարդ չը կայ. Գրիշուտկան տանն է. նա կը նայէ» (իսկ Գրիշուտկան միայն չորս ամսական է) Բանը վերջանում է նրանով, որ ծնողները տուն են ուղարկում ուսումնարանում սովորող որդուն՝ տանը ու երեխային նայելու, իսկ իրանք մնում են։ Տղան արտասուքը աչքերին հեռանում է ուսումնարանից.

Ընթերցանութիւնների ձգողական զօրութեան մասին վկայում են և թւերը։ Այսպէս Աջատսկի ուսումնարանում առաջի ընթերցանութեան ներկայեն եղել 100 մանուկ և 80 հասակաւոր, երկրորդի ժամանակ արդէն եկել են 170 մանուկ և 130 հասակաւոր, երրորդին—180 մանուկ և 170 հասակաւոր։ Դրանից յետոյ սկսեցին չը թողլ տալ փոքր պատրաստականցիներին և այնուամենայնիւ հաւաքւեցին 375 հոգի, մեծ մանուկներից 100 հոգի և հասակաւորներից 275, հինգերորդին—385 հ., վեցերորդին—400։ Պետերգոֆի գաւառում ամեն մի ընթերցանութեան ներկայ են լինում 100—200 հոգի։

Գրքոյկները ներկայ եղողներին աւելի հասկանալի դարձնելու համար, ուսուցիչը կամ վարժուհին յաճախ ստիպւած են լինում բացատրել, բովանդակութիւնը իրանց խօսքերով պատմել և նոյն իսկ լրացուցիչ տեղեկութիւններ տալ։ Հարկ չը կայ ասելու, որ այս լրացումները ու բացատրութիւնները ոչ միայն վնասակար չեն, այլ և չափազանց օգտակար։ Դրանք կարճացնում են երկարաբանութիւնները, կենդանացնում ընթերցանութիւնը, առաջ են բերում լսողների կողմից նկատողութիւններ, հարցեր։ Այս բանի շնորհիւ ընթերցանութիւնը կորցնում է իւր այն հանդիսաւոր պաշտօնական բնաւորութիւնը, որ աչքի է ընկնում քաղաքներում կատարւող ընթերցանութիւնների ժամանակ. այս վերջիններում բարձր, սարի վրայ նստած կարդացողը և ցածր, գետնի վրայ գտնւող ընթերցողը շատ հեռու են թւում իրարից։ Այդպէս չի լինում գիւղերում, որտեղ ընթերցանութիւնների ժամանակ երբեմն տաք խօսակցութիւն ու վիճաբանութիւն է սկսւում ընթերցողի ու լսողների մէջ։ Այս բանը շատ նպաստում է ուսուցիչների կամ վարժուհիների և հասակաւոր գիւղացիների մօտիկանալուն և այդպիսով առաջ է գալիս առաջինների ազդեցութիւնը վերջինների վրայ ոչ միայն գիտութիւններ տարածելու, այլ և ուրիշ տեսակէտներից։

Ուսումնարաններից շատերում ստւերաւոր պատկերներով ընթերցանութիւնների ժամանակ, լինում է և երգեցողութիւն. երգում են և աշակերտները և աւարտածները, ով միայն ձայն ունի։ «Գիւղացիներին երգը պատկերներից աւելի է դուր գալիս»—գրում են մեզ Եարոսլաւի նահան-

գիր։ «Երգեցողութիւնը մեծ նշանակութիւն ունի, ասում է վարժուհիներից մէկը, նա սրտաշարժ տպաւորութիւն է թողնում ներկայ եղողների վրայ, որոնք նոյն իսկ բարձրաձայն խոստովանում են այդ բանը»։

Հետաքրքիր է տեսնել, ինչպէս են վերաբերւում դէպի ընթերցանութիւնը անգրագէտները։ Մեզ գրում են. «գիւղի համարեա բոլոր անգրագէտները, ով միայն կարող է հեռանալ խրճիթից, ուսումնարան էին հաւաքւում»։ Ընթերցանութիւններ յաճախող անգրագէտների տոկոսը ցոյց տալու համար, առաջ բերենք մի քանի հետաքրքիր թւանշաններ մի վարժուհու տաղանդաւոր կազմած հաշւից. եօթ ընթերցանութիւններին ներկայ են եղել՝ միջին և բարձր բաժանմունքի աշակերտներից 93 հոգի, նոյն բաժանմունքի աշակերտուհիներից—58, հին աշակերտներից—162, հին աշակերտուհիներից—128, գրագէտ տղամարդկանցից—143, գրագէտ կանանցից—108, անգրագէտ տղամարդկանցից—82, անգրագէտ կանանցից—127։ Այսպէս ուրեմն գրագէտ հասակաւորների թիւը (251) վերաբերւում է անգրագէտ հասակաւորների (209) թւին դրեթէ ինչպէս 1,2:1։ Այս թւերը պարզ ապացուցանում են լուսաւորւելու ձգտումը անգրագէտների մէջ։ Ոչ սակաւ հետաքրքրելի դիտողութիւն է հաղորդում ուսուցիչներից մէկը։ «Ընթերցանութիւններից յետոյ գրքեր էին վերցնում ո չ մ ի ա յ ն գ ր ա գ է տ ն ե ր ը, ա յ լ և ա ն գ ր ա գ է տ ն ե ր ը, որովհետև նրանց որդիքը յաճախել էին կամ յաճախում էին ուսումնարանը»։ Գրագէտ, կամ կիսագրագէտ փոքրիկները մատչելի էին դարձնում գրքերը իրանց անգրագէտ ծնողներին, որոնք այս կամ այն պատճառով գրագիտութիւնից զուրկ էին մնացել։ Գիւղի անգրագէտների վրայ ունեցած ազդեցութեան մէջ չի կարելի չը տեսնել ժողովրդական ընթերցանութիւնների ամենաօգտաւէտ կողմերից մէկը։

Մոգական լապտերը չի կարելի ցանկանալի հիւր չը համարել գիւղի համար։ Տարաբաղդաբար, նա դեռ ևս գիւղում մի հազւագիւտ բան է, մի հրաշք է։ Միայն մի քանի զեմստւօներ են գիւղերում հիմնած ժողովրդական ընթերցանութիւններ։ Այսպէս նրանք գոյութիւն ունեն Մոսկւայի, Պետերգօֆի, Ելիսաւետգրադի, Ալեքսանդրիյսկի և կարծեմ Ստարօօսկօլսկի (Կուրսկ նահանգի) գաւառներում. նոյնպէս Սմօլենսկ, Եարօսլաւ նահանգների ու Սարատովսկ և Օխանսկ գաւառների մի քանի ուսումնարաններում։ Պետերգօֆի գաւառում ընթերցանութիւնները ահա հինգ տարի է գոյութիւն ունեն։ Գաւառական զեմստւօն տարեկան տալիս է 300 ռ. պատկերներ լրացնելու և ընթերցանութիւններ վարողների վարձատրութեան համար։ Գործը այսպէս է դրւած. գաւառի բոլոր ուսումնարանները բաժանւած են ութ կարգի, նայելով ուսումնարանների դիրքին և նրանց մէջ գոյութիւն ունեցող հաղորդակցութեան միջոցներին. ամեն մի կարգ ուսումնարանների համար զեմստւօն ձեռք է բերել նոյնպէս պատկերների առանձին պաշար։ Ամեն տարի պատկերները բաժանւում են կարգերի

մէջ սիստեմատիկաբար այնպէս, որ միեւնոյն պատկերները չարմար մի քանի ընթերցանութիւնների և զանազան գրքոյկների հետ (օրին. Պետրոս Մեծի մասին—Ֆիլսնովի, Պետրուշևսկու, Շալֆէևի գրքոյկները). ամեն մի կարգ ուսումնարանների մէջ թէ լապտերը և թէ պատկերները չրջում են ուսումնարանից ուսումնարան։

Ընթերցանութիւնները սկսում են հէնց որ գիւղում երևում է լապտերը և հետևում են մէկը միւսին շատ կարճ միջոցներից ետոյ. շատ անգամ լինում են ամեն օր։ Լապտերի ամեն մի գալուն ընկնում է 4—13 ընթերցանութիւն, ամեն մի ընթերցանութիւնը տևում է երկու, երեք, չորս ժամ։ Երբ ընթերցանութիւնների ու պատկերների պաչարը սպառւում է, վերջնական ընթերցանութիւն է լինում, որտեղ ցոյց են տալիս բոլոր պատկերները և կարճ կերպով կրկնւում են բոլոր ընթերցանութիւնները (հարցերով, կենդանի խօսակցութիւններով պատկերների առաջ)։ Ետոյ լապտերը պատկերների հետ միասին անցնում է հարևան ուսումնարանը և վերադառնում է միայն միւս տարին, բայց արդէն ուրիշ պատկերներով։ 1886—1887 ուսումնական տարւայ միջոցին գաւառում կատարւել է 124 ընթերցանութիւն, 1887—1888—173, 1889—1890—297։

Որտեղ խառն ազգաբնակութիւն է (չուխոններ և ռուսներ), այնտեղ ընթերցանութիւնները առանձին կերպով են լինում. ֆին ուսուցիչը նախապէս ֆիներէն պատմում է բովանդակութիւնը, ետոյ կարդում է ռուսերէն։ Խերսոն նահանգի, Ալեքսանդրիպակ գաւառում ընթերցանութիւնները գոյութիւն ունեն 1888 թ.-ից 39 ուսումնարաններում։ Այդ տարին զեմստուվի վարչութիւնը այդ առարկայի համար նշանակեց 1000 ր. և այդ փողով ձեռք բերին 6 լապտեր և 300 պատկեր։ 1889 թ. յունուարին բոլոր ուսուցիչներին և ուսուցչուհիներին հրաւիրեցին զեմստուվի վարչութեան տունը, որտեղ նրանց ծանօթացրին լապտերի գործածութեան հետ։ Ետոյ ընթերցանութեան գործը կազմակերպւեց այնպէս, ինչպէս Պետերգոֆի գաւառում։ 1888—1889 թ. 39 ուսումնարաններում եղել է 134 ընթերցանութիւն, որին ներկայ են եղել 24,677 հոգի, այսինքն ամեն մէկին 184 հ.։ Մոսկուայի գաւառում ընթերցանութիւնները սկսած են 1888 թ. զեմստուվի 54 (ետոյ 61) և գործարանների 5 ուսումնարաններում։ Այստեղ—«Статистическій ежегодникъ Московской губерніи» ասելով—դրանք իրանց տեսակի տոներ էին, ուր մեծ սիրով էին հաւաքւում թէ տեղացիները և թէ շրջակայ գիւղերից այնպէս, որ սովորաբար բոլորի համար տեղ չէր գտնում։ Մոսկուայի նահանգի 43 գիւղերում 1888 թ. եղել է 124 ընթերցանութիւն, որոնց ներկայ են եղել 22,434 հոգի։

Այսպէս ուրեմն ստերաւոր պատկերներով ընթերցումների օգուտը և աջողութիւնը գիւղում անկասկածելի են։ Այնուամենայն, որ մինչև այժմ մի անհասկանալի նախապաշարմունք կայ լապտերի և նրա հետ կապ-

ված ընթերցումների դէմ. ինչպէս յայտնի է, 1876 թ. հրատարակած «ժողովրդական ընթերցանութիւնների համար կանոնները» թոյլ են տալիս ընթերցումներ միմիայն նահանգական քաղաքներում և աչքի առաջ չունեն ոչ միայն գիւղերը, այլ նոյն իսկ գաւառական քաղաքները, ուր լապտերը պաշտօնապէս թոյլ է տրուած 1889 թ.։ Մինչև այժմ չկայ կանոնադրութիւն, որը թոյլ տար ընթերցանութիւններ հասակաւոր գիւղացիների համար, որոնք, ինչպէս տեսանք ստիպուած են բաւականանալ ուսումնարանական ընթերցանութիւններով։ Միայն երկու տարի սրանից առաջ թեմական խորհուրդների մասին հրատարակած կանոնադրութեան մէջ ցուցմունք կայ, որ մոգական լապտերը չուտով կը մտնէ և գիւղը։ Չորրորդ յօդուածը ասում է՝ թեմական գաւառական խորհուրդների (որոնց մէջ մտնում են և ժողովրդական ուսումնարանների տեսուչները) պարտականութիւններից մէկն է «նպաստել ժողովրդական ընթերցանութիւններ կազմելուն»։ Մեզ յայտնի են դէպքեր, երբ քահանաների և տեղական ինտելիգենցիայի շնորհիւ, թեմական խորհրդի նպաստմամբ ընթերցանութիւններ են սարքուել, գլխաւորապէս կրօնական—բարոյական բովանդակութեամբ և ժողովրդական գիտնական բաժանմունքով։ Ընթերցանութիւնը վարում է տեղական քահանան։

Սխալ է կարծել, որ այսպիսի ընթերցումներ սարքելը թանգ է նստում. նա աւելի շատ հոգս է պահանջում, քան ծախս։ Այդ գործը գլուխ բերելու համար մօտաւորապէս ահա, ինչ գումար է պահանջւում։ Ամենալաւ լապտերը երեք պատրոյգով և մի կրեմալյէրով (кремальерка) [1] արժէ 50 ր., էկրանը [2] իւր նեցուկով—10—15 ր. սակայն այս վերջինները աջողութեամբ փոխարինւում են սաւանով ու սեղանով։ Ամենաթանգ նստողը—պատկերներն են, որ կարելի է ստանալ 80 կոպէկից սկսած (և ոչ 2 ր. ինչպէս գրուած է ցուցակներում)։

Պատկերները այնպիսի ահագին նշանակութիւն ունեն, որ ամեն մի սկսող պէտք է իրան այդ կողմից լաւ ապահովացնի։ Կատարեալ ուշադրութեան արժանի են այսպէս անուանած էժանագին պատկերները։ Նրանք պատրաստւում են մի այնպիսի ձևով, որը անկասկած ապագայ ունի։ Այդ պատկերները ուրիշ բան չեն, եթէ ոչ դեկալկոմաններ, կամ փոխադրուող պատկերներ, որոնք առանձնապէս պատրաստւում են (Գերմանիայում) մոգական լապտերի համար։ Պատրաստւում են թափանցիկ ներկերով անսովոր թղթի վրայ. ցանկացողը յետոյ ինքը կարող է փոխադրել ապակու վրայ [3]. Մեզ

---

[1] Կրեմալյէրը մի երկաթ է որը կեռ ծայր ունի։

[2] Մի շրջանակի մէջ քաշած սաւան, որի վերայ ստացւում է պատկերի ստուերը։

[3] Դեկալկոմանները կարելի է ձեռք բերել Պետօ-ի խանութում (Спб., Кара-

պատահել է այդ կերպ պատրաստած և ապակու վրայ փոխադրած գեղեցիկ պատկերներ տեսնել. Ֆիզիքական աշխարհագրութեան, ժողովրդագրութեան, անասնաբանութեան, պատմութեան վերաբերեալ, պատկերներ «Ռոբինզոն Կրուզոյից», «արաբական», Հաուֆի հեքիաթներից և այլն։ Ամեն մի ապակի չորս պատկերներով արժէ 15 կ.։ Ինչ վերաբերում է կոմիկական պատկերների ընտրութեան—նա շատ մեծ է։

Մենք համոզուած ենք, որ մոգական լապտերի համար փոխադրուող պատկերները փայլուն ապագայ ունեն. հեռու չէ այն ժամանակը, երբ նրանք պատուաւոր տեղ պիտի բռնեն ուսումնական պարագաների շարքում. Նրանց ընտրութիւնը կը լինի աւելի մեծ և աւելի մանկավարժական, քան այդ անում է պ. Պետօն կամ ուսումնական պարագաների արհեստանոցը [1]։

Առ այժմ դժուար է գուշակել, ինչ նշանակութիւն կունենան ստուերաւոր պատկերներով ընթերցանութիւնները ոչ միայն գիտութիւններ տարածելու և հարբեցողութեան դէմ կռուելու գործում, ոչ միայն իբրև լուսաւորութեան գործիք, որը մատչելի է դարձնում գրքերը թէ գրագէտ և թէ անգրագէտների համար, այլ և իբրև մի հող, որի վրայ կը կատարուի վարժապետի կամ վարժուհու մոտենալը գիւղի հասակաւորների հետ։

B.

ванная): Միայն աւաղ, որ պ. Պետօն պատկերների ընտրութիւնը շատ անփոյթ է կատարում. Նա համարեա չունի այն ամենալաւ պատկերներից, որոնք յայտնի են արտասահմանում. Բացի դրանից գները շատ թանգ են նշանակուած. իսկ Ֆենու-ին այդպիսի պատկերները բոլորովին անյայտ են։ Այդպիսի պատկերներ, միայն արդէն ապակու վրայ փոխադրած, կարելի է գտնել «Ուսումնական պարագաների արհեստանոցում» (Спб., Троицкая ул.) մի արկղիկը 6 ապակիներով, որոնցից իւրաքանչիւրը 3—4 պատկեր ունի, արժէ 2 ր., բայց և այստեղ դրանց ընտրութիւնը այնքան մեծ չէ, ոչ էլ այնքան աջող։ Կարելի է բերել տալ նոյնպէս Ա. Մ. Կալմիկովայի գրավաճառանոցից (Спб., Литейный пер. № 60)։

[1] Մոգական լապտեր կառավարելու համար շատ լաւ ձեռնարկ է պ. Երժելսկու գիրքը. գինն է 60 կ.։